

հատակ մը, որուն վկայաբանութիւնը գրուած է անոր ազգական և ուսուցիչը եղեսացի Թէոդորի վարքին մէջ:

3. Մար-Սարայի վանքին պատմութիւնը.

Ըստ Մարինոսի, Կիւրեղ Սկիւթուպոլսեցիին նայելով՝ Մար-Սարա այս վանքը շինած է Յուստինիանոս կայսեր նիւթական օժանդակութեամբը, ինչպէս որ կը հասկցուի նոյն կայսեր գրած մէկ նամակէն՝ ուղղեալ առ եպիսկոպոսն գաւառին. չըջակայ թշնամիներէն զերծ մնալու համար, վանքը շինուած է բերդի մը նման, ըստ յանձնարարութեան կայսեր: Նոյն իսկ Մար-Սարայի օրով այս վանքին մէջ կ'ապրէին բազմաթիւ անապատականներ, որոնց գլխաւոր բնակարաններն էին մերձակայ ձորակին փապարները. երկաթի մը ծայրով շատ դիւրին էր փխրել ժայռը և շինել բնակարաններն, որ մինչև ցայսօր կը մնան, ինչպէս ըսինք: Կ'ըսուի թէ այստեղ բնակած են մինչև 10,000 վանականներ, որ կ'ապրէին իրենց ձեռական աշխատութեամբ: Դարձեալ, ըստ Մարինոսի, այս վանքին մէջ ընծիւղած են Սարայցիի, Կիւրեղացիի, Եւսեբեւսի և Դաւանալացիի, նոյն իսկ Ոսկեքերսե, որ իբր թէ իր մէկ գիրքին մէջ նշանակած է այս պարագան: Սարայի վանքը՝ ի սկզբանէ ենթակայ էր դրացիներուն յարձակմանց: Է. դարու սկիզբն ալ Պարսիկները հիմնադրուած կործանեցին զայն: Յիշատակութիւն մը չունինք թէ Սաչակիրք ժամանակ ունեցա՞ն վերականգնելու այս վանքը: Մեր Երուսաղէմացի Յովհաննէս եպիսկոպոսը (Հաննէ) իր Պատմութեան մէջ (էջ 282) կը գրէ թէ Կիւ Մանուէլ թագաւորը վերանորոգած է զայն պարիսպներով, աշտարակներով և խուցերով, և ան կը թուէ ութը եկեղեցիներ նոյն վանքին մէջ: Պատմութենէ յայտնի է թէ Կիւ Մանուէլը (1143-1180) քաղաքական նկատումներով սերտ յարաբերութեան մէջ էր Երուսաղէմի լատին թագաւորին և կղերին հետ, և թէ անոնց կ'ընծայէր նիւթական եւ բարոյական օժանդակութիւն Բեթղեհէմի Ս. Ծննդեան եկեղեցւոյն վերանորոգութեան առթիւ, ինչպէս կը վկայէ նոյն եկեղեցւոյն մէջ գտնուած լատիններէն յիշատակարան մը. այս պատճառով, հաւանական է որ նոյն կայսրը վերաշինած ըլլայ Մար-Սարայի վանքը: Դարձեալ, ըստ Մա-